

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԸՆԿՆԱՄԵՒՅ

Ա.  
ԲԱՀՐԱՄ ԳՈՒՐ  
ԵՆ  
Ա. Զ. Ա. Դ Է

Պարսկ. բնագրից թարգմանեց  
Թ. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

1934

Տպարան «ՄՈՒՆԻՐ», Թ-Լեռան

891.5

Ֆ - 65

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԸԱՅՆԱՄԵԻՑ

891.5  
Փ-65

Ա.

ԲԱՀՐԱՄ ԳՈՒՐ

ԵՆ

Ա. ԶԱԴԷ

889  
38

Պարսկ. բնագրից թարգմանեց  
Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

1934

Տպարան «ՄՈՂԵՐՆ», ԹԷԻՐԱՆ

06 SEP 2013

9481

Կեանքիս ուղեկից Լիդիա Աբրահամեանին,  
որի հագագիւս նաւակով ընտրուած է թարգ-  
մանութեան համար սոյն հասուածը, նւիրում եմ  
զրոյկս:



2013 թ. 10 ամի 10 օր

23747.59

2013 թ. 10 ամի 10 օր

## ԱՌԱՋԱԲԱՆ

«Բոհրամ Գուր և Ազադէ» հատուածը մի նշանաւոր էպիգրոֆ է, որ տեղ է գտել Ֆէրդոփուսու լայնածաւալ Շահնամէում: Նրա հերոսն է Բոհրամ Ե. (420—438), սովորաբար Բոհրամ Գուր կոչուած, որ մարմնացումն է և մարդկայնացումը Վըրըթրագհնա (ըստ պահլաւականին Վորտհրան) յաղթութեան աստուածութեան և որին համապատասխանում են հայկական դիցաբանութեան (աւանդական պատմութեան) մէջ արքայազն Վահագն, որի ծննդեան ժամանակ «Երկնէր երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով» և վրաց դիցաբանութեան մէջ Վախթանգ Գորգամըշի:

Ստանալով յաղթութեան աստուածութեան կայծակնային ատարիբուաները, այդ հերոսը բնականաբար հզօր է, յախուռն, դաժան: Նա հարուածում է առիւծներին, վիշապներին, անարկու գայլին, նա որսի աստուածն է: Նա բուռն սիրով է սիրում Ազադէին և միևնոյն ուղտի վրայ նստացրած տանում է իր սրբութիւն սրբոցը—որսադաշտ: Բայց նա նոյն Ազադէին ամենաանդուծ կերպով ուղտի ոտների տակ է նետում և արորում: Իր բոլոր գործողութիւնների մէջ նա ամպրոպային է:

Մեր ժամանակի տեսակէտից այս հատուածը մի գեղեցիկ բալլադ է, որ գալիս է հնագոյն ժամանակներից, այդ հաստատում են ուսական էրմիտաժի

այն երկու արծաթէ սկուտղները և բրոնզէ մատուցա-  
րանը, որոնց բովանդակութիւնը վերցրած է այս լի-  
գինդից և որոնք շինուած են աւելի վաղ, քան ստեղ-  
ծագործուել է Շահնամէն:

Շահնամէից այս հատուածը թարգմանելու ժա-  
մանակ փոխանակ ոտանաւորի տողերն ընդարձակելու  
11-ից մինչև 15-16 վանկ կամ կիսելու և երկու տո-  
ղը չորս դարձնելու, մենք որոշեցինք հաւատարիմ մը-  
նալ բնագրին և պահպանել նրա չափը:

Բնագիրը կազմել ենք համեմատելով Շահնա-  
մէի երեք վարիանտներ (Մոլի հրատարակութեան,  
Բոմբէյի հէջրի 1272=1855 թ. և Սաւորի):

Բնագրից զատ ձեռքի տակ ունեւել ենք Бах-  
рам Гур и Азадэ գրքոյկը, որ սիրալիւր կերպով  
մեզ շնորհեց պոռֆեսսոր Օրբելին:

Որսի մանրամասնութիւնները ներկայացնող և  
մինիատիւրներից ծագող երկու մանրանկարները վերց-  
րած են յիշեալ Бахрам Гур и Азадэ գրքոյկից:



Գրքոյկիս մէջ պարսկական դռբոր նշանը (—, որ հաւասար է անգլիերէն a-ին bad բառի մէջ) արտա-  
յայտուած է շրջուած ա-ով (a):

Պարսկական շ գիրը տառադարձուած է ' նը-  
շանով, որ ցոյց է տալիս, որ արտասանութեան ժա-  
մանակ պէտք է վայրկենապէս կանգ առնել և ապա  
շարունակել. օրինակ ناله—Նո'ման:

Ռ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ



ԲՈՂՐԱՍ ԳՈՒՐ ԵՒ ԱԶԱԴԷ



Գնդակն էր նրա գործն ու մէյդանն արձակ,  
Մերթ զարկը չովգանի<sup>1)</sup>, մերթ որսը վայրագ:  
Եւ արդ, չոնգահարին<sup>2)</sup> մի օր հետն առած  
Առանց շքախմբի որսադաշտ գնաց:  
Անունն Աղաղէ էր ուումի<sup>3)</sup> աղջկայ,  
Սուտակ էր երեսի վառ գոյնը նրա:  
Արագավազ ուղտի<sup>4)</sup> նստեց նա մէջքին,  
Հետն Աղաղէն նոճի՝ տաւիղը ձեռքին:  
Նրա սիրուհին էր, սէրը զեռանաս,  
Անունը սիրասուն շրթին հանապազ:  
Եւ նա որսի օրը մի ուղտ պահանջեց  
Ու մէջքը զիպակով շքեղ վարդարեց:  
Ճօճուում էին մէջքին չորս հատ ասպանդակ,  
Սար ու ձոր անոււմ էր վազքով ոտնատակ:  
Մի զոյգն արծաթի էր, ոսկուց էր միւս զոյգ,  
Գոհարներով պատած ու խայտաճամուկ:  
Կապած էր գաւակին ինքնաձիգն<sup>5)</sup> անշարժ,  
Հերոսն ամէն գործում հմուտ էր ու վարժ:  
Երկու զոյգ վիթ<sup>6)</sup> ելաւ Բոհրամի առաջ,  
Աղաղէին ժպտով ասաց Գուրը քաջ.  
«Ո՛վ լուսնագէմ, երբ ես աղեղը լարեմ  
«Եւ օղակով<sup>7)</sup> գնդակը թափահարեմ,  
«Ո՞ր եղջերուն կուզես, որ վայր նետեմ ցած,  
«Այն էզը ջահել է, արուն ձերացած»:  
Աղաղէն Բոհրամին «Ո՛վ առիւծ, ասաց,

«Տղամարդը վիթին չի գլորի ցած.  
«Թէ կարող ես, էգին արու դու դարձուր,  
«Իսկ այն ծեր արուին էգի պատկեր տուր:  
«Ապա դու չափ զցիր ուղտն արագավազ,  
«Երբ վիթը ճողոպրի նետիցդ անվնաս,  
«Ինքնաձիգից գնդակ նետիր, որ նա ցած  
«Ականջը պինդ սեղմի ուսին խոնջացած:  
«Ականջը քոր կը գայ զարկից, կենդանին  
«Կը մօտեցնի խկոյն իր ոտը ուսին:  
«Գլուխն ու ոտ ուսին կարիր միալար,  
«Թէ կուզես քեզ կոչեմ հերոս մեծափառ»:  
Բտհրամ հէնց որ լսեց խօսքը սիրունի,  
Յիշեց մի ասացուած<sup>8</sup>) նա հին, վաղեմի:  
Աղեղը այնուհետ Բտհրամը լարեց  
Եւ այն լոին դաշտում շփոթը տիրեց:  
Մի նետ կար երկսայրի<sup>9</sup>) նրա գաւակին,  
Որսի համար պահուած իր ժամանակին:  
Եւ արդ, երբ եղջերուն փախչել սկսեց,  
Իր նետը երկսայրի թափով նա գցեց,  
Արուի եղջիւրներն առաւ գլխէն ցած,  
Գեղեցկուհին մնաց ապշած, զարմացած:  
Այն ժամ խկոյն և եթ էգ դառաւ արուն,  
Առանց եղջիւրների մնաց եղջերուն:  
Ապա տեղում էգի զոյգ եղջիւրների  
Երկու փքին գամեց որսորդը արի:  
Եւ եղջիւրների տեղ զոյգ նետը գլխին,  
Սիրտը լալ արիւնից՝ հեծեց դառնագին:  
Դէպ միւս զոյգն ապա նա արշաւեց ուղտով,  
Գունդը գնդի յետեից յարդարելով:  
Գնդակն ապա վիթի նետեց ականջին,



Հմուտ էր նա, վարպետներից առաջին:  
Անպաշտպան եղջերուն ականջը քորեց,  
Բոհրամն աղեղի մէջ մի նոր նետ դրեց.  
Գլուխ, ոտն ու ականջ կարեց միալար,  
Ազադէն մորմոքաց կենդանու համար:  
Բոհրամն ասաց. «Լուսին, ինչպէս դու գտար».  
Ազադէի աչքից դետ հոսեց վարար:  
Շահին ասաց աղջիկն. «Այդ չէ մարդկութիւն,  
«Մարդկային չէ, դէի է քո բնութիւն»:  
Ձեռքը մեկնեց Բոհրամ, թամբից առնաբար  
Առաւ նրան, զարկեց գետին գլխիվայր:  
Լուսնադէմի վրայ արշաւեց ուղտով,  
Կուրծք ու ձեռք ու տաւիղ ներկեց արիւնով:  
Այսպէս ասաց ապա. «Անմիտ չոնգահար,  
«Ի՞նչ դաւեր ունէիր իմ դէմ խօլաբար.  
«Եթէ լինէր նետիս հարուածը անգոր,  
«Իմ տոհմը այդ զարկից կը դառնար ստոր»:  
Ուղտի ոտներէ տակ երբ նա թրպրտաց,  
Գուրն էլ աղջկայ հետ որսի չը գնաց:



մեքենայ) — պողպատի աղեղ, ամրացած երախակալի վրայ և ձգուած զսպանակով, որ նետում էր յատուկ նետեր և գնդակներ: Լարն արձակած ժամանակ գընդակը դուրս էր թռչում ակօսածև փոսիկի միջով որոշ ուղղութեամբ:

6. Վիթ — գազել, անտիլոպների մի տեսակը:

7. Օղակը գործ էր անում աղեղը լարելու ժամանակ՝ ուժեղացնելու լարումը:

8. Այդ ասացուածը ըստ երևոյթին բացատրուած է հետագայ տողերի մէջ.

Եթէ լինէր նետիս հարուածը անզօր,  
Իմ տոհմը այդ վարկից կը դառնար անզօր:

9. Երկսայրի նետ. — գործ էին անում որսի ժամանակ. մետաղէ ծայրապանակը երկճղանի էր կամ կիսալուսնաձև:



### ԲՈՂՐԱՍ ԳՈՒՐ



Բոհրամ Գուր, ըստ մեր պատմագրերի՝ Վռամ, որդին Յազկերտ (Ետզզերզ) Ա. Չարագործի և հայրը տխրահռչակ Յազկերտ Բ. — ի, Շահնամէի ամենասիրուած հերոսներից էր և իշխում էր 420—438 թ.: Նրա մանկութեան և երիտասարդութեան մասին Ֆէրզովսին հետևեալն է պատմում:

Երբ Բոհրամը ծնւում է, մովբեդներն ու աստղագէտները գուշակում են նրա համար փայլուն ապագայ. ապա Յազկերտը յանձնում է նրան Եմենի թագաւորներ Մոնզէրին և Նո՛մանին, որ նրանք նրան տանեն Արաբիա և դաստիարակեն: Մոնզէր ընտրում է երեք հմուտ անձանց, որոնք պէտք է ղեկավարէին մանուկի դաստիարակութիւնը: Տասներկու տարեկան հասակում նա ինքնագլուխ դարձաւ և որսում ու չովգան խփելում նմանը չունէր:

Մոնզէրի հրամանով Նո՛մանը հարիւր ձի է բերում դաշտը, որոնցից Բոհրամ ընտրում է երկուսին: Ապա նրա մօտ բերում են 40 ուռմի ստրկուհիներ, որոնցից ընտրում է երկսին, մէկը չոնգահար\*), իսկ միւսը՝ «կակաչայտ, որպէս Ետմոնի Կանոպէն\*\*):

Շուտով տեղի է ունենում այն արիւնակի դէպ-

\*) Սոյն հատուածի հերոսուհին:

\*\*\*) Աստղ հարաւային կիսագնդի:

քը, որ նկարագրուած է սոյն հատուածի մէջ: Որսա-  
 դաշտում Բոհրամը հրաշքներ է գործում, մանաւանդ  
 ցիւներ (վայրի էշեր—պարսկերէն՝ «գուր») որսալիս,  
 որ նա շատ սիրում էր և այդ պատճառով, կամ գուցէ  
 իր ճարպիլութեամբ նրանց նմանուելու հետևանքով,  
 նրա մականունը Գուր մնաց:

Հօր կարօտը քաշում է Բոհրամին Պարսկաս-  
 տան և նա նո՛ւմանի հետ գալիս է Յազկերտի մօտ Տիգ-  
 բոն: Այստեղ նա փառաւոր ընդունելութիւն է գտնում,  
 բայց շուտով բանտարկւում է կասկածոտ հօր ձեռքով.  
 շուտով նա փախչում է Նմեն: Այնտեղից նա գալիս է,  
 տիրում է հայրական գահին, մեծ քաջագործութիւն-  
 ներով երկիրը մաքրում է զանազան հրէշներից և դառ-  
 նում է Իրանի արժանաւոր թագաւորներից մէկը:




برانگیخت زآن دشت ارمنده شور  
 بدشت اندر از بهر نخبیر داشت.  
 سپید سر و پای آن نره تیز  
 کنیزک بدو مانده اندر شکفت  
 سرش زان سروی سیه ساده گشت  
 زده چنات مرد نخبیر گیر  
 بخون اندرون اهل گشته مرش  
 بخم گمان مهره در مهره ساخت  
 پسند آمدش بود جای پسند  
 خدنگی نهاد آن ز مات در گمان  
 بران آهو آزاده را دل بسوخت  
 روان کرد آزاده از دیده جوی  
 نه مردی ترا خوی دیوانگی است  
 نگوئسار بر زد بروی زمین  
 برودست و چنگش بغون برفشاند  
 چه بایست چندین بما بر شکن  
 از این زخم تنگی شدی گوهرم  
 بنخبیر از انیس کنیزک نبرد .

կառա շը Կրճ Բե-րամ Գոր  
 Դուրիկան Բերկշ Իկի Կիր Դաշտ  
 Եմանգե Կե Դհո Տը Դնդր Կրիշ  
 Բտիր Դուրիկան Զ Տեր Բր Կրֳֳտ  
 Եմ Դնդր Զման Նրե Չոն Մադե Կշտ  
 Եման Բր Տրո Կադ Մադե Դու Կիր  
 Դուրիկան Եյայ Տրո Բր Տրշ  
 Եիւոտ Ղասույ Կֳֳտ Դիկր Բտաչտ  
 Եկոշ Իկի Դհո Դնդր Բկննդ  
 Բտարիճ Կոշ Դհո Դնդր Զմատ  
 Տրո Կոշ Վաիշ Իկի Կա Բոսոչտ  
 Բոսո Կֳֳտ Չոն Դստ Դյ Մադ րույ  
 ԴԲ Դշադ Կֳֳտ Դյն Նե Մրճ Դնկր Դստ  
 Բրճ Դստ Բերամ Վ Դր Զ Զին  
 Եիւոն Դր Բր Մադ Չեդր Բր Դնդ  
 Չոնիճ Կֳֳտ Կայ Բիչրճ Կիչկրն  
 Դ Կր Կնդ Բոս Կշադ Բրմ  
 Չո Դր Զ Բր Դյ Եիւոն Կան Չարճ



فردوسی - شاهنامه



# بهرام گور و آزاده

ترجمه بزبان ارمنی

روبن آبراهامیان

۱۳۱۳

مطبعه « مدرن » طهران